

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ԲՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՄՈՍԿՒԱՅՈՒՄ

Ինչպէս չափնի է Ռուսաստանում պարբերաբար լինում են բնագէտների համագումարները: Այդ համագումարները չեն լինում միշտ միևնույն քաղաքում. նրանց տեղը միշտ փոխւում է համաձայն համագումարի անդամների ցանկութեան:

Մինչև ներկայ 1894 թիւը եղել են արդէն 8 համագումարներ, ինչորորդը նշակած էր անցած չունւար ամսի սկզբում, որը և բացւեց Մոսկվայում հաղարից աւելի մասնակցողների ներկայութեամբ:

Ի՞նչ է այդ համագումարների նպատակը: Եթէ ի նկատի ունենանք այն հանգամանքը, որ Ռուսաստանի համեմատաբար փոքրաթիւ բնագէտները խմբւած լինելով գլխաւորապէս միմեանց հեռու գտնւող համալսարաններում, ապրում և աշխատում են իրարից հեռու, անջատւած, մեղ համար հասկանալի կը լինի համագումարների անհրաժեշտութիւնը. խմբւելով մի տեղ՝ բնագէտները շփւում են իրար հետ, նրանց մէջ կատարւում է մտքերի փոխանակութիւն, որը շատ օգտաւէտ է լինում մասնակցողների համար և նոր ուժ ու եռանդ է տալիս նրանց գիտնական աշխատանքները շարունակելու համար:

Ներկայ IX երորդ համագումարը բացւեց Մոսկւայում պրոֆեսոր Տիմիրեազեւի շնորհաւորական ճառով: Որովհետև այդ ճառի գէթ մի մասը ունի ընդհանուր նշանակութիւն և կարող է հետաքրքրական լինել նաև հայ ընթերցողի համար, ուստի աւելորդ չի լինիլ աչտեղ քաղաածօրէն առաջ բերել ճառի մի քանի կտորները: Ընթերցողը անշուշտ շատ անգամ լսած կը լինի հետեւեալ խօսքերը՝ «Տասն իննեւորդ դարը բնագիտութեան դար է»: Հէնց նույն այդ մտքի վրայ կենտրոնացնում է իր խօսքերը հուշակաւոր պրոֆեսորը ¹⁾. Նա ընդունում է այդ միտքը, բայց

¹⁾ Պրոֆեսոր Տիմիրեազեւը չափնի է դառել ոչ միայն Ռուսաստանում, այլ և ամբողջ Եւրոպայում շնորհիւ իր բուսաբանական հետազոտութիւններին:

միևնույն ժամանակ ցուց է տալիս, որ հասարակութիւնը սխալ է հասկա-
նում նրան: Նատերը՝ ըստ Տիմիրեազեւի, ընդունելով, որ ոչ մի գիտութիւն
մեր դարում չի արել ահապիսի հակապահան առաջադիմութիւն, ինչպէս
քնազիտութիւնն է արել կարծում են թէ առաջադիմութիւնը կազանում է
աչն բազմաթիւ գիւտերում, որոնք տեւ են բազմաթիւ չարմարութիւններ
մարդկային կեանքին: Դրանց կարծիքով, շոգենաւն, երկաթուղին, հեռա-
խօսը, հեռագրական գործիքը կամ էլեքտրական լուսն են կազմում քնազի-
տութեան առաջադիմութիւնը: Տիմիրեազեւը սաստիկ ընդէմ է ալդ տեսակ
կարծիքի: Նա ցուց է տալիս, որ քնազիտութեան առաջադիմութիւնը
ամենևին չի կազանում ալդ փալլուն և կեանքին չարմարութիւններ տուող
գիւտերում, այլ աչն մեծ օրէնքներում, որոնցով հարստացել է մեր դարում
քնազիտութիւնը և որոնցով հիմնովին վերափոխել են մարդկանց աշխար-
հաբացողութիւնը:

«Այո, չարունակում է պրոֆ. Տիմիրեազեւը, բոլոր ալդ փալլուն նիւ-
թական չարմարացումները (ալսինքն՝ երկաթուղին, շոգենաւը, տեւեֆոնը...)»
միմիայն արտաքին չատկանիչ են կազմում աչն խոր գաղափարական չարթ-
ման, որը նշանաւոր դարձրեց XIX դարը»:

Ձը հերքելով, որ ալդ չարմարացումները մեծ նշանակութիւն ունին
մարդկանց համար, Տիմիրեազեւը միևնույն ժամանակ աշխատում է համ-
ողել, որ դժբա չեն կազմում գիտութեան փառքը: Այդ չարմարացումները
ըստ Տիմիրեազեւի, ուրիշ ոչինչ են, եթէ ոչ փշրանքներ, որոնք թափու-
մ են գիտութեան սեղանից»:

Ունկնդիրներին աւելի ևս համոզելու համար,
Տիմիրեազեւը առաջ է բերում չալտնի ֆիզիկոս Բուլցմանի աչն խօսքերը,
որոնցով ալդ վերջինը չալտում է որ եթէ իրան հարցնէին, թէ ինչպէս
նա կանւանէր տասնուիններորդ դարը—արդեօք երկաթի, չոգիի կամ էլեկ-
տրականութեան դար—նա կը պատասխանի. «ոչ, ես նրան (XIX դարը)
կանւանեմ քնութեան մեքենապական բացատրութեան և Դարւինի
դար»:

Պրոֆեսոր Տիմիրեազեւի ճառի միայն մի մասն է բաղկացած ալդ դա-
տողութիւններից, միւս մասում ճգնում է ապացուցանել, որ իբր թէ ռուս
ազգը գլխաւորապէս գէպի բնական գիտութիւնները ձգտում ունի: Յար-
գելի պրոֆեսորի ասելով՝ քնազիտութիւնն է, որ ամենից մօտիկ է ռուս
ազգի ոգուն: Իբրև ապացոյց ալդ մտքի՝ նա առաջ է բերում մի քանի
չալտնի ռուս բնագէտների անունները: Առհասարակ ճառի ալս երկրորդ
մասը աչնքան յիշէ, որ չարթէ նոչն իսկ աշխատել հերքել նրան: Զար-
մանալի է նոչն իսկ, որ մի ալդպիսի երեւելի գիտնական, որպիսին է Տի-
միրեազեւը, չի նկատում իր խօսքերի ակներև թուլութիւնը: Տարաբաղ-
տաբար մեր ժամանակներում քիչ չեն աչնպիսի գիտնականներ, որոնք
հիւանալի են երբ խօսում են իրանց մասնագիտութիւնից վերցրած հար-

ցերի մասին, բայց հենց որ դուրս են գալիս մասնագիտութեան սահմանից, զարմացնում են բոլորին իրանց թույլ դատողութիւններով:

Հետաքրքրական զեկուցումների շարքին պատկանում էր Նաև պրոֆեսոր Չուպրովի զեկուցումը, որի վերնագիրն էր. «Վիճակագրութիւնը իբրև կապող օղակ բնագիտութեան և հասարակագիտութեան մէջ» (Статистика, какъ связующее звено между естествознаниемъ и обществознаниемъ) Պրոֆ. Չուպրովը իր ալը զեկուցման մէջ ցուց տաւ, որ հասարակական գիտութիւնները անջատւած չեն բնագիտութիւնից, ալ կապւած են վերջինի հետ շնորհիւ վիճակագրութեան, որը ալժամ սաստիկ կարևոր է թէ բնագէտների համար և թէ իրաւաբանների համար, օրինակ մի քանի բնական գիտութիւններ (որպիսիք են մարդաբանութիւն, և մետեորոլոգիան) ալժամ առանց վիճակագրութեան անկարող են առաջադիմել: Հասկանալի բան է, որ աւելի ևս անհրաժեշտ է վիճակագրութիւնը հասարակագիտութեան համար:

Ոչ սակաւ գրաւեց ունկնդիրների ուշադրութիւնը պրոֆ. Վոլեկովի ճառը վերաբերեալ մետեորոլոգիական հետազոտութիւններին: Իր զեկուցման մէջ պրոֆ. Վոլեկովը Նախ ծանօթացրեց ունկնդիրներին մետեորոլոգիայի ծագման և զարգացման պատմութեան հետ Ռուսաստանում: Ըստ պրոֆ. Վոլեկովի՝ մետեորոլոգիան աչն ժամանակ կը կարողանալ զարգանալ և մեծ օգուտներ տալ, երբ Ռուսաստանի զանազան անկիւններում կը հիմնեն բազմաթիւ օդերևութաբանական կայարաններ:

Տարօրինակ ճառ ասեց պրոֆ. Կոլլին վերաբերեալ միկրոքներին: Ինչպէս չափնի է՝ ալժամ ապացուցւած մի իրողութիւն է համարւում, որ բակտերիաները կենդանի էակներ են և պատկանում են բուսական աշխարհին: Նոչնպէս չափնի է, որ բակտերիաները, ինչպէս բոլոր բոյները, ընդունակ են զարգանալ և բազմանալ՝ արտադրելով բազմաթիւ սերունդներ:

Չնայած դրան՝ Մոսկուայի բնագէտների համագումարում պրոֆ. Վոլլին չափաւարեց ի գիտութիւն բոլոր բնագէտների, որ ինքը չի ընդունում ալը հալեացքը վերաբերեալ միկրոքներին: Ըստ պրոֆ. Կոլլիի՝ միկրոքները կենդանի էակներ չեն և ոչնչով նման չեն ոչ կենդանիներին ոչ էլ բոյներին: Միկրոքները՝ պրոֆ. Կոլլիի ասելով՝ մեռած նիւթ է, որը ընդունակ է ենթարկւել զանազան քիմիական փոփոխութիւնների:

Ահա ալը քիմիական փոփոխութիւններն են, որ ընդունում են իբրև միկրոքների աճումն:

Մի խօսքով պրոֆ. Կոլլին չընդունելով ապացուցւած ֆակտերը ճգնում է չարուցանել աչն հալեացքը միկրոքների վրայ, որը գոյութիւն ունէր մի քանի տասնեակ տարիներ մեզնից առաջ և որը վաղուց արդէն

խորտակած է շնորհիւ Պատեօրի և միւս գիտնականների ջանքերին, բացի վերև թւածներից՝ կարդացեցան բազմաթիւ ղեկուցումներ վերաբերեալ կենդանաբանութեան, երկրաբանութեան, ֆիզիկալին, բուսականութեանը, ֆիզիոլոգիալին, գիւղատնտեսութեանը, վիճակագրութեանը և բնագիտութեան միւս ճիւղերին։ Սակայն ալդ ղեկուցումները կրում են չափազանց մասնագիտական բնաւորութիւն, ուստի նրանց վրայ կանգ առնելը աւելորդ կը լինէր։

Կարդացեցան նաև մի քանի ճառեր վերաբերեալ հոգեբանութեանը։ Օրինակ ալդ նիւթին էին նւիրած երկու չափոնի ֆիզիոլոգների — Սէչենովի և պրոֆ. Դանիլեւսկու ղեկուցումները։

Արժանի է ուշադրութեան, որ ալժմ հոգեբանութիւնը փոքր առ փոքր մտնում է բնական գիտութիւնների շարքը։ Առաջ հոգեբանութիւնը համարում էր մետաֆիզիքական գիտութիւն, ալդ պատճառով էլ նրանով զբաղում էին գլխաւորապէս փիլիսոփաները և ոչ բնագէտները։

Հիմալ բանը փոխել է. ալժմ աւելի ու աւելի է տարածւում ալն հաւեցքը թէ հոգեբանութիւնը նոյնպէս պէտք է հետազօտել զրական մեթոդներով ինչպէս և բնական գիտութիւններ ¹⁾։

IX-դ համագումարը Մոսկալում կապաքեց մի քանի որոշումներ, որոնք ունեն մեծ նշանակութիւն։

Նախ որոշեց համագումարի կողմից հետեւալը. Խնդրամատոց լինել՝ ուր հարկն է՝ որպէս զի ինչքան կարելի է աւելի շուտ բացեն բարձրագոյն իգական բժշկական կուրսերը։

Երկրորդ որոշումն էր. Խնդրամատոց լինել, որպէս զր տեխնիկական բարձրագոյն ուսումնարաններում մտցնել առողջապահութեան դասատւութիւնը։ Այս որոշումը պատճառաբանւում է նրանով, որ տեխնիկաներին վիճակում է կեանքում գործ ունենալ մեծ թւով բանւորների հետ, ուստի նրանց համար օգտաւետ կը լինէր իմանալ առողջապահութիւնը։

Նոյնպէս ալդ համագումարի կողմից ընդունւած է իբրև սաստիկ ցանկալի ալն միտքը, որ զաւառներում հիմնեն տեղական ընկերութիւններ բնութեան և ազգաբնակչութեան ուսումնասիրութեան համար։

Վերջին համագումարը բացելով չունւարի 4-ին տեւց մի շաբաթ և փակեց չունւարի 11-ին։

ՍԱՄՈՒԷԼ ԲԱԼԱՂԵԱՆ

¹⁾ Համեմատեցէք ալդ մասին «Մուրճ»-ում ալժմ տպւող բժ. Թ. Զաքարեանի չօղւածը՝ «Բժշկականութիւնը և հոգեբանութիւնը»։